

Անի դիալոգ

**Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների միջև**

Թուրքիա, Հեյբելիադա

7-10 հուլիսի, 2011

Անի դիալոգը Հենրիխ Բոյլ հիմնադրամի և Կովկասի ինստիտուտի կողմից նախաձեռնված ծրագիր է, որը խրախուսում է հայ-թուրքական հարաբերություններում երկխոսության ներքնից վերև մոտեցումը և նպատակ ունի հաղթահարել անցյալի ժառանգությունն ու խաղաղություն հաստատել Հարավային Կովկասում: 2011թ՞ հուլիսի 7-10-ը այս ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր երկխոսություն Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև: «Հասարակությունը և պետությունը Հայաստանում և Թուրքիայում» վերնագրով երկխոսությունը տեղի ունեցավ Հեյբելիադայում՝ Ստամբուլում: Ծրագրի ընթացքում հայկական և թուրքական տարբեր կազմակերպությունների անդամներ հանդիպեցին միմյանց,



այդ թվում Արփինե Մաժինյանը՝ որպես ՔՀԶԿ կամավոր:

Ծրագրի ընթացքում կազմավորվեցին հետևյալ չորս խմբերը՝ քաղաքացիական ներգրավվածություն, ընտրություններ և ներկայացվածություն, շրջակա միջավայր և բնական ռեսուրսներ, խոսքի ազատություն և մեդիայի զարգացում: Յուրաքանչյուր խմբում գլխավոր քանախոսները զեկուցեցին իրենց երկրներում տվյալ ոլորտի իրավիճակի մասին, մասնակիցները քննարկեցին նշված հարցերի նմանություններն ու տարբերությունները, կիսեցին այդ խնդիրներով զբաղվող իրենց կազմակերպությունների փորձը և խոսեցին Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև հետագա հնարավոր համագործակցության մասին: Մասնակիցները նաև հնարավորություն ունեցան այցելելու Ստամբուլի մի քանի հասարակական կազմակերպություններ և ծանոթացան նրանց գործունեությանը: Օրինակ, քաղաքացիական ներգրավվածություն խմբի անդամ ՔՀԶԿ կամավորն այցելեց ԼԳՖՏ մարդկանց իրավունքներին առնչվող խնդիրներով

զբաղվող Լամբդա հկ, Ամարգի կանանց կազմակերպություն և հանդիպեց մի կամավոր նախաձեռնության ներկայացուցիչների հետ, որի թիրախը Ռոմա մարդիկ են:

Այսպիսով, Անի դիալոգը կարողացավ կապեր հաստատել Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության դերակատարների միջև, ինչը էականորեն նպաստում է երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացին:

Արփինե Մաժինյան